Վանո Սիրադեղյան

Ձեռ ես տվել՝ խաղա

Այնինչ, դուք արդեն թռնում եք, «ազգայիններս»: Այդպես է, երբ բերանը չափ չի ունենում, ոտքերը պիտի պատրաստ լինեն ամեն պահ ծլկելու: Միայն թե պետություն ղեկավարելը թաղի լակոտների կռիվ չէ, որ մեր քրֆես ու փախչես: Ոչ էլ «ազգային ազատագրական» դաշաղություն, որ քրդի մի կով որպես մսացու մորթելու դիմաց հայկական մի գյուղ մատնես մորթվելու եւ սարով անցնես մյուս գավառ: Իսկ դուք, «փրկիչներս», պետության ներքին ու արտաքին հարաբերությունները իջեցրիք Ցախի Մեյդանի հայաթի (լակոտական) կռվի մակարդակին: Երկիրը դարձրիք Թուլեքի Թագավորություն:

600 տարի երազածը, 80 տարի առաջ մեկ անգամ ձախողվածը, 7 տարիների ընթացքում կարոտով, արյունով ու սիրով հիմքերը դրածը: Որպեսզի ձեր քոսոտ տեսքը համապատասխան լինի միջավայրին (այս լեզուն դուք եք ներմուծել հայ մամուլ - ներողամիտ եղեք), փուշտունների փնթի բնազդով ավերեցիք ու պղծեցիք ձեզանից առաջ եղած ամենայն բան - պետություն, գաղափար, ընկերություն, անուն, պատիվ եւ ավանդույթ: Եւ հիմա գնո՞ւմ եք: Հիմա նրանք դարձյալ գնում են... Առայժմ՝ պատասխանատվությունից: Իհարկե, հակառակորդին ուշունցի կապած ու հոխորտալով, որ կվերադառնան: Ինչպես վայել է կռվից փախչողին: Ինչպես վայել է կռիվը գցող ու արանքը ճղող պրովոկատորին: Հիմա պիտի ձեւ անեն, թե հայտարարություն անելով ուզում են իրար (վոյին ու օյին) օգնած լինել Ամերիկայի բանակցություններից առաջ: Ճշմարտությունը, սակայն, այն է, որ եկել է հաշվենկատ ամուսնության վերջը, որովհետեւ դաշնակցության մեջ հաղթեց արեւելյան կլանը: Բարեբախտաբար, Իրանի իսլամական պետությունը սանձերը քաշեց՝ իրեն ենթակա Իրանի,

Սիրիայի ու Լիբանանի Դաշնակցական մարմիններին արգելելով Մեղրին սարքել բազարի առարկա: Իր հերթին ռուսական սահմանապահ զորքերի հրամանատար Տոցկին նրբանկատորեն Մեղրու հատված տեսչական ստուգման չգնաց, ցուցադրելու համար, որ Հայաստանի այդ հատվածը Ռուսաստանը վստահում է Իրանի պահպանությանը՝ Ադրբեջանի, Թուրքիայի եւ Հայաստանի թուրք-դաշնակցական ալյանսի ոտնձգություններից:

Ահա թե ում ենք պարտական լինելու Մեղրին չկորցնելու համար: Իսկ Ամերիկայի դերը պարզ կդառնա շուտով: Քանի որ Հայաստանի համար միջազգային ամենատարբեր սանկցիաների շրջան է սկսվել, առաջիկայում Դաշնակցության հանդեպ Արեւմուտքի վերաբերմունքից կզգացվի՝ Ամերիկան ուզո՞ւմ էր Մեղրին օտարել մեզանից, թե՞ ոչ: Եթե դաշնակցականների ձերբակալություններ եղան Արեւմուտքում, նշանակում է՝ այո, եթե՝ ոչ, ուրեմն՝ ոչ: Այո, այդքան պարզունակ եւ կոպիտ: Երբ դիվանագիտության լեզուն չեն հասկանում, իջնում են նաեւ այդ մակարդակին: Ինչպիսին Զորի Բալայանին ինտերպոլով փնտրելու դեպքն է: Դրան հաջորդած քայլը Ադրբեջանի արտգործնախարարի հայտարարությունն է՝ Քոչարյանին Խոջալուի համար դատի տալու մտադրության մասին: Եւ գործը Քոչարյանով չի սահմանափակվելու:

Կարծեմ, նոյեմբերին արդեն ասել եմ, որ ժամանակը կգա, մեզ կհիշեցնեն Խոջալուն: Ինչեւէ: Հասկացողը հասկանում է, որ նույնիսկ Ադրբեջանի ու Հայաստանի նման իքի-բիր պետությունների ղեկավարները չեն կարող իրենց թույլ տալ բանակցությունների նախօրյակին նման անարգիչ հայտարարություն անել, եթե այն համաձայնված չլինի շահագրգիռ կողմերի հետ: Եթե Ադրբեջանի արտգործնախարարը այդ հայտարարությունը անելու հաջորդ օրը չի պաշտոնազրկվել (որովհետեւ նրա հետ այլեւս ոչ մի արտգործնախարար ոչ միայն զրույցի չէր նստի, այլեւ ձեռքը չէր սեղմի), նշանակում է դա միայն Ադրբեջանի տրամադրվածությունը չէ, եւ, հետեւաբար, Քոչարյանի բանը բուրդ է: Նրան սպառնում է Միլոշեւիչի ճակատագիրը: Այս փակուղում հայտնվելով՝ նա ամեն ինչի ընդունակ է: Այդուհանդերձ, սխալ են անում նրանք, ովքեր պահանջում են Քոչարյանի հրաժարականը: Հասկանալի է, որ տագնապած են երկրի ճակատագրի համար: Բայց հանուն հենց այդ երկրի ապագայի՝ պետք չէ

դա անել, մանավանդ որ, վստահեցնում եմ ձեզ, այդ մտահոգությունը չի գնահատվելու: Այնպես որ, թողեք ինքը տրամաբանական վախճանին հասցնի այն ավանտյուրան, որ ձեռնարկել է 3 տարի առաջ: Չարժե այդքան թերագնահատել նրա մտավոր կարողությունները: Նա հասկանում է իր վիճակը եւ կուզենա երկիմաստ մի վիճակում արանքը ճղել: Պետք չէ այդպիսի առիթ տալ նրան: Թող մնա, որ գնալիս հետը տանի վարձկանների իր բանդան՝ իր քվեարկողներով, իր կեղծողներով, ծափահարողներով, գրչի ու լեզվի սազանդարներով, իր նման հետին թվով ֆիդայիներով ու պահեստապետական էկանամիստներով... Հայաստանի մթնոլորտը կարիք ունի միանգամից մաքրվելու ասիական բաղնիքի այն գարշահոտից, որ կախված է լինում օդում աշխարհազորի եւ մեդրեսեների սաների խմբակային ու զանգվածային լոգանքից հետո: Տրամաբանական ավարտը անհրաժեշտ է, որպեսզի ժողովուրդը վերջապես հասկանա, որ գերագույն ազգային գաղափարը - ունեցած երկիրը շենացնելն է, ոչ թե չեղած բանի համար Կիկոսի դեգեներատ տնեցիների նման սուգուշիվան կապելը: Եւ որ երկիրը մարդուս նույն տունն է, ոչ թե ապուպապի գերեզմանին կից սպասարկող անձնակազմի բուդկա: Վերջին հաշվով, ձեռ են տվել-պիտի խաղան:

.

13.04.2001